

նա երկար տարիներէջ ի վեր վարում է ս. Երուսաղէմի լուսարարացեալի պատասխանատու պաշտօնը:

Սահակ սրբազանի ընտրութիւնն ի կաթողիկոսութիւն ի սրտէ ողջունելով «Լուսար ի խմբագրութիւնը լիալոյս է, որ նորա պաշտօնավարութիւնը պիտի ծառայէ Կիլիկիայի լըքեալ հալ հօտի բարոյական շինութեան, մաղթում ենք, որ նորա օրօք վերանայ Կիլիկիայի հալ ժողովրդի կրօնական պառակտումը, վերջ տուի այնտեղ կատաղի կերպով մղուող՝ եզդւորների և բողոքական քարոզիչների պրօպագանդային և հիմք դրուի թշուառ ժողովրդեան մէջ ուսման և դիտութեան ծաւալման:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼԵՃԱՑԻՔ ԵՒ Ս. ԷԶՄԻՈՍԻՆ

Տարույս ապրիլ ամսի սկզբին երկու լեհացի քահանաներ դիմելով Ամերիկայի հայոց առաջնորդ Տ. Յովսէփ եպս. Սառաճեանին՝ մատուցել են հետեւեալ խնդրադիրը.

«Ամերիկայի լեհացի ժողովուրդէն մաս մը հինգ տարի առաջ հռովմէական եկեղեցիէն բաժնուելով կազմեցին այժմ «Լեհական ուղղափառ եկեղեցի» մը: Ութ քահանաներ կը պատկանին այժմ մեր ալդ եկեղեցւոյն, որուն հիմը կը կազմէ՝ Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը բաւ ս. Վրոց պարունակութեան և առաջին տիեզերական ժողովոց — Նիկիոյ, Կ. Պօլսոյ, Նիքիոսի և Քաղկեդոնի վճիռները: Հիմա կուզենք մեր եկեղեցիի ապագան ապահովել թէ հօս՝ Ամերիկայի մէջ, և թէ Լեհաստանի մէջ, և մեր ալդ նպատակին հասնելու համար կուզենք ունենալ եպիսկոպոս մը իբրև գլուխ: Ուստի, ձեզի դիմելով, կաղաչենք որ մեր քահանաներէն մին՝ մեր կղերական դասէն և ժողովուրդէն ընտրուելով եպս. ձեռնադրուի ձեր Առաքելական և կաթողիկէ Հայ Եկեղեցիէն՝ Նաժակս ներկայացնող արժ. քահանաները, որոնք մեր եկեղեցւոյ պատուիրակներն են, պիտի բացատրեն ձեզ մեր կրօնական դատին մանրամասնութիւնները: Ձերդ խոնարհ ծառայ ի Քրիստոս Ֆրանս ս ու լ զ Լ ո ս ու լ ր, վարիչ լեհական ուղղափառ եկեղեցւոյ լԱմերիկայի:

Սառաճեան սրբազանը լալտնելով պատգամաւորներին, որ առանց ծալրաբուն իշխանութեան թոյլտուութեալ ինքը ոչ նոցա ընծայացունելին կարող է քահանայ ձեռնադրուի և ոչ նոցա եպիսկոպոսացուին ուղարկել Էջմիածին ձեռնադրուելու՝ խնդիրը մատուցել է Վհն. Հայրապետին ի տնօրէնութիւն:

Ազգիս Հոգևոր Պետը, որքան մեզ լալտնի է սիրով ընդունելով ալդ խնդիրը՝ հրամանագրել է Ամերիկայի հայոց առաջնորդին՝ նախապէս որոշել խնդրատու ժողովրդի և նոցա

հովիւների լարաբերութեան խնդիրը Մալը Աթոռի հետ և տեղեկագրել իրան:

Հետևանքի մասին մենք կհաղորդենք իւր ժամանակին մեր ընթերցողներին:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1896 թուականի սարսափների պատճառով Տաճկահայաստանից Ռուսիա ապաւինած գաղթականները տարւոյս օգոստոս ամսին խմբերով սկսան վերադառնալ հայրենիք Կարսի վրայով: Դոցա վերադարձը դիւրացնելու համար՝ Ալդիս վեհափառ Հայրապետը Կարուց լաջորդին առանձին կոնդակով պատուիրեց անձամբ գնալ գաղթականների մօտ և լալանել, որ նոքա կամ աշխատեն ընդունել ռուսահայատակութիւն, կամ վերադառնան Տաճկաստան ալլ կողմերից և կամ անցնել Պարսկաստան, որտեղից կարող են վերադառնալ հայրենիք Մակուի խանութեան վերայով:

ՓԱՐԻՋԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԷՔԸ

Յալտնի հարուստ և բարեգործ Պ. Աղէքսանդր Մանթաշեանը, Վանքի աւագ եկեղեցին ի ներքուստ հոյակապ կերպով նորոգել տալուց լետով, այժմ մի փառաւոր եկեղեցի է կառուցանում Պարիզում տեղական հալ գաղութի համար, որոնց թիւը 250 ընտանիքի է հասնում, բացի բազմաթիւ ուսանողներից: Տեղը ընտրուած է ամենազլխաւոր փողոցում, Շանդէլիզէի վերայ և այս օրերս կատարուել է հիմնարկէքի հանդէսը Եւրոպայի հալոց Առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոս իւթիւճեանի ձեռքով: Սակայն ցււօք սրտի պիտի ասենք, որ Հայաստանեայց եկեղեցու այդ նուիրական և շքեղ հանդէսը, ինչպէս հաղորդում է «Բիւզանդիոն» լրագրին նորա Պարիզի թղթակիցը, կատարուել է շատ անշուք կերպով և Մալը Մաշտոցի սահմանած կարգերը չեն պահպանուել ըստ պատշաճին:—Եւրոպիոյ առաջնորդ սրբազանն, գրում է այդ թղթակիցը, օգտուելով բարիզաբնակ ժողովրդեան միաժողութեան և կամ անտարբերութեան, բալց չուսալով որ կյանուին մէկ և կամ երկու հասկցող անձինք,—արարողութիւնը փոխանակ ըստ Մաշտոցի կատարելու, համարձակութիւն ունեցաւ առանց զգեստաւորուելու վեղարով, առանց խաչ և գաւազանի, հիմնարկէքի 16 քարերը մի առ մի օծել և միւռնաշաղախ մատներով անմիջապէս խնկարկել է ետեւ, գոցել տալու...: Եթէ ստույգ են լրագրիւնների հաղորդածները, կարելի է հիաս-